ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 սեպտեմբերի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

132
(2798)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

Ո՞Վ ԿՆՇԱՆԱԿՎԻ ՔԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԻՆ



Քրեակատարողական ծառայության պետի պաշտոնի համար կռիվ է գնում, սակայն քաղաքական իշխանությունները դեռ վերջնական որոշում չունեն: Հիմա էլ հասել են «նախկիններ»ի կադրերին. «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների հանաձայն՝ հասել են ԱԻՆ փրկարար ծառայության տնօրենի նախկին տեղակալ, ներկայումս դատական կարգադրիչների ծառայության պետ Արման Ցոլակյանին: Նշենք, որ Ցոլակյանը ժամանակին համարվում էր ԱԻ վաղամեռիկ նախարար Արմեն Երիցյանի կադրը, որի շնորհիվ՝ Ցոլակյանը տարբեր պաշտոններ է զբաղեցրել: Փաստորեն, հիմա էլ փորձում է ներկայիս իշխանության «ափսեում» տեղավորվել:

Հիշեցնենք, որ ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանն էլ ամեն ինչ անում է, որ այդ պաշտոնին նշանակի իր համակուրսեցի Թադեւոս Նիկոլայի Նալբանդյանին, որը ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի տեղակալներից մեկն է, իսկ, ահա, ուժային կառույցները այլ թեկնածու ունեն:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների հանաձայն՝ ուժային կառույցներն ակտիվ քննարկումների մեջ են ու ամեն ինչ անում են, որ Քրեակատարողական ծառայության պետ նշանակեն ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության պետ Ալեքսանդր Հակոբյանին:

Թե ով կհաղթի այս պայքարում, ժամանակը ցույց կտա:

Երեւանի ավագանու ընտրություններում ձախողելուց հետո իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում իսկական «ցեխշպրտոցի» է սկսվել: Իշխանականներն այս օրերին մեղավորներ ու արդարացումներ են փնտրում իրենց ֆիասկոն արդարացնելու համար: Ինչպես իշխանական մեր աղբյուրներն են փոխանցում, ՔՊ-ում այլեւս հաշտ ու հանգիստ մթնոլորտը երազանք է դարձել. հիմա թիմում շատ լարված ու անհաշտ մթնոլորտ է տիրում, իշխանականներն ամեն պատեհ-անպատեհ առիթի «խայթում են» միմյանց, փորձում են նոր մեղավորներ կարգել: Գրել էինք, որ ՔՊ վարչության նիստին Նիկոլ Փաշինյանը խոստացել է «պատժել մեղավորներին» ու մաքրել թիմը «անգործունյաներից». հիմա իշխանականները փորձում են առիթ փնտրել Փաշինյանի հետ առանձին հանդիպումների համար, որպեսզի արդարանան ու ցույց տան, որ իրենց ձեռքից եկած ամեն բան արել են, որ այս իրավիճակը չունենան: Այսպիսով, ՔՊ-ականները փորձում են իրենց ապահովագրել, որպեսզի Փաշինյանի «ձեռքն» իրենց չհասնի, ու թիմում մոլեգնող պաշտոնանկությունն իրենց դուռն էլ չթակի:

«Ժողովուրդ» օրաթերթը նախօրեին գրել էր, թե ինչով է զբաղված շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը: Եզրակացրինք, որ ստորագրվել է մի հուշագիր, որը, ըստ երեւույթին, Հայաստանին պետք էլ չէ: Այդ քննարկման եւ գործուղման ընթացքում Սիմիդյանին Հայաստանում փոխարինում են տեղակալները, որոնցից մեկը Գայանե Գաբրիելյանն է: Գաբրիելյանը պաշտոնի նշանակվել է 2021 թվականի հուլիսի 23-ին: Մինչ փոխնախարար դառնալը Գաբրիելյանը որտեղ ասես չի աշխատել: Սկզբում խանութի տնօրեն է եղել, ապա՝ «Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ում ապրանքների սպասարկման առաջին կարգի մասնագետ, հետո՝նույն ՊՈԱԿ-ում իրավաբանական վարչության մասնագետ: Նա շրջել է աշխատատեղերով, եւ որեւէ հաստիք չկա, որ երկար տարիներ աշխատած լինի փոխնախարարը: Հիմնական հաստիքը, որով այդ աշխատավայրերում հանդես է եկել Գաբրիելյանը, եղել է գնումների փորձագետը: Նա նաեւ դասախոս է աշխատել եւ աշխատում ԵՊՀ-ում եւ ՀՊՏՀ-ում: Մինչ նախարար դառնալը նա աշխատում էր էկոնոմիկայի նախարարությունում՝ որպես Հանրային ներդրումների քաղաքականության վարչության պետ: Թե ինչ կապ ունի այսպիսի գործունեություն ունեցող անձը շրջակա միջավայրի հետ, անհայտ է: Ինչեւէ, այս ընթացքում՝ 2018 թվականին, նա հասցրել է ձեռք բերել հիփոթեքով բնակարան, որի մայր գումարի մնացորդը 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 10 մլն 551 հազար դրամ: Գաբրիելյանը 2019 թվականին ձեռք է բերել 2010 թվականի արտադրության, Mitsubishi մակնիշի ավտոմեքենա: Փոխնախարարի բանկային ավանդները կազմել են 3 մլն 710 հազար դրամ, բանկային հաշիվների մնացորդը՝ 421 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 12 մլն դրամ: Նրա տարեկան եկամուտները կազմել են 13 մլն 528 հազար դրամ, որից 13 մլն 340 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից, իսկ 188 հազար դրամը՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ից: Հիշեցնենք նաեւ, որ Գաբրիելյանը, շրջակա միջավայրի հետ կապ չունենալով, հանդիսանում է Պետական գնումների միության անդամ:

Հռոմի ստատուտը, որը ՀՀ կառավարությունն ուղարկել է Ազգային ժողով՝ վավերացման, վարչություններում փորձաքննության է ենթարկվել: Նախ նշենք, որ խորհրդարանում այս նախագծի հիմնական զեկուցողը լինելու է միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը: Այսպիսով, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ իրավական փորձաքննության տեսանկյունից խնդրահարույց նորմեր չեն հայտնաբերվել, սակայն նշվել է, որ միջազգային պայմանագրի վավերացման նպատակահարմարության մասին տեղեկանքը նախագծին կից ներկայացված չէ: Միաժամանակ նշված է, թե միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության մեջ կիրառված են մի շարք հասկացություններ եւ եզրույթներ, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ կերպ են ձեւակերպված կամ սահմանված: Մյուս փորձաքննության արդյունքների հետ կապված դիտողություններ չեն եղել:

ԶՐՈՒՅՑ

ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՄԻԱԿ ՇԱՆՍ

Երեւանի ավագանու ընտրություններից հետո իսկական փակուղային իրավիճակ է ստեղծվել ավագանիում. Երեւանը փաստացի այս պահին քաղաքապետի պաշտոնը չունի:

Սեպտեմբերի 17-ին կայացած Երեւանի ավագանու ընտրության նախնական արդյունքներով՝ ավագանու կազմ անցած ուժերից որեւէ մեկը չունի մեծամասնություն եւ չի կարող ստանձնել քաղաքապետի պաշտոնը:

Այսպիսով, ընտրության նախնական արդյունքներով՝ «Քաղաքացիական պայմանագիր»-ը ստացել է ձայների 32,5 տոկոսը, «Ազգային առաջընթաց»-ը՝ 18,9 տոկոսը, «Մայր Հայաստան» դաշինքը՝ 15,4 տոկոսը, «Հանրապետություն»-ը՝ 11,3 տոկոսը, «Հանրային ձայն»-ը՝9,7 տոկոսը:

Երեւանի ավագանու 65 մանդատներից 24-ը կստանա «Քաղաքացիական պայմանագիր»-ը, 14-ը՝ «Ազգային առաջընթաց»-ը, 12-ը՝ «Մայր Հայաստան»-ը, 8-ը՝ «Հանրապետություն»-ը եւ 7-ը՝ «Հանրային ձայն» կուսակցությունը:

Հոկտեմբերի 10-ին՝ գործող ավագանու լիազորությունների ավարտի օրը, նորընտիր ավագանին պետք է գումարի առաջին նիստը. եթե որեւէ քաղաքական ուժ չունի 50+ մանդատ, ապա այդ դեպքում արդեն ավագանին պետք է երկշաբաթյա ժամկետում ընտրի քաղաքապետ:

Եթե այս 2 շաբաթվա ընթացքում ավագանու անդամները չկարողանան համաձայնության գալ ու ընտրել քաղաքապետի, կնշանակվեն նոր ընտրություններ:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում սահմանադրագետ Վարդան Այվազյանը, խոսելով իրավիճակից ելքերի մասին, նշեց՝ եթե ընդդիմադիրներն այս փուլում համաձայնության չգան եւ քաղաքապետ չընտրեն, ապա երկրորդ փուլով իշխող ուժի քաղաքապետի թեկնածու Տիգրան Ավինյանը կընտրվի՝ պարզ մեծամասնական ընտրակարգով:

-Նոր ընտրությունների դեպքում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը Տիգրան Ավինյանին կառաջադրի քաղաքապետի թեկնածու, դիցուք՝ մյուս երեք քաղաքական ուժերը թեկնածու չեն առաջադրում, երկրորդ փուլով ոչ պակաս, քան 40 % ձայն է անհրաժեշտ ընտրվելու համար, եթե մեկ թեկնածու է առաջադրված, իսկ ՔՊ-ն եւ «Հանրապետություն»-ը միասին մոտ 49 % ձայն ունեն՝32 մանդատ, երկրորդ փուլով այս երկու կուսակցությունները կքվեարկեն, եւ Տիգրան Ավինյանը կանցնի: Մյուս երեք խմբակցություններից կլինեն մարդիկ, որոնք չեն մասնակցի, ՔՊ-ն «Հանրապետության» հետ կընտրի քաղաքապետ՝ պարզ մեծամասնական կարգով: Ես իրավական ուղին եմ ասում, իսկ թե ինչ տեղի կունենա, ինչ կբանակցեն, մենք չենք կարող ասել:

-Պարոն Այվազյան, իսկ ի՞նչ պիտի արվի, որպեսզի Ավինյանը քաղաքապետ չդառնա:

-Որպեսզի Ավինյանը քաղաքապետ չդառնա, ապա ընդդիմադիրների բացառիկ եւ միակ շանսն այն է, որ առաջին փուլով իրենք իրենց 33 % մանդատով քաղաքապետ ընտրեն:

Եթե չարեցին, ուրեմն Ավինյանը շատ հեշտ կդառնա քաղաքապետ: Մի դեպքում ՔՊ-ն քաղաքապետ չի ունենա՝ եթե առաջին փուլով 33 մանդատով իրենց թեկնածուին ընտրեն:

Սա ընդդիմադիրների միակ շանսն է. ընտրությունների երկրորդ փուլով Տիգրան Ավինյանը կանցնի:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԻՊ–Ը՝ ՀՐԵՏԱԿՈՇՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ադրբեջանի զինված ուժերի կողմից սանձազերծված ռազմական ագրեսիան Ստեփանակերտի եւ այլ քաղաքացիական բնակավայրերի ուղղությամբ ձեւախեղում է մարդու իրավունքների պաշտպանության ժամանակակից համակարգի հիմքում ընկած բոլոր արժեքները:

ՄԻՊ-ից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը կոչ է անում մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող միջազգային հեղինակավոր կազմակերպություններին եւ դերակատարներին անհապաղ քայլեր ձեռնարկել:

Պաշտպանը հատուկ ընդգծում է, որ Ադրբեջանի զինված ուժերի ագրեսիվ վարքագիծը կոպտորեն ոտնահարում է միջազգային իրավունքի սկզբունքները, իրական վտանգ է ներկայացնում քաղաքացիական բնակչության կյանքի իրավունքի եւ անվտանգության, ինչպես նաեւ մյուս հիմնարար իրավունքների ապահովման տեսանկյունից:

Հավելենք, որ պաշտպանը եւս մեկ անգամ հիշեցնում է՝ քաղաքական եւ տարածքային որեւէ հանգամանք չի կարող գերակայել մարդու իրավունքների պաշտպանությանը: Մարդու իրավունքները պետք է գերակա լինեն բոլոր իրավիճակներում եւ աշխարհի ցանկացած անկյունում: Պաշտպանը կոչ է անում իրավապաշտպան ամբողջ հանրությանը համախմբվել այս նպատակի իրացման շուրջ եւ կանխել մարդու իրավունքների ժամանակակից համակարգի ձեւախեղումը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ

Աժ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը գրում է. «Արցախի Հանրապետությունը թիրախավորվել է Ադրբեջանի կողմից. ԱՀԱՋԱՆԳ՝ միջազգային գործընկերներիս:

Այսօր (երեկ-խմբ.)՝ ժամը մոտ 11:10-ից սկսած, Ադրբեջանը եւ՛ տարբեր տրամաչափի հրթիռներով, անօդաչուներով, եւ՛ այլ հարվածային զենքերով հարձակվել է Արցախի անպաշտպան ժողովրդի վրա: Հարվածում են Արցախի բոլոր ինքնապաշտպանական դիրքերին եւ հատուկենտ մնացած ռազմական օբյեկտներին:

Կեսօրից Արցախի դպրոցականներն ու մանկապարտեզի սաներն էվակուացվել են դեպի ապաստարաններ, Արցախում կյանքը կանգ է առել: Քաղաքացիները, որոնք 9 ամսից ավելի է, ինչ սոված օրեր են անցկացնում, այժմ գտնվում են կյանքի ու մահվան պայքարում. խախտվում է նրանց կյանքի իրավունքը:

Խաղաղ բնակչության վրա այս լայնամասշտաբ հարձակումն Ադրբեջանի կողմից տարբեր միջազգային կոնվենցիաների կոպտագույն խախտում է:

Հրատապ գրություններ եմ ուղարկել միջազգային իմ գործընկերներին եւ Հայաստանում հավատարմագրված դեսպաններին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով այս հանցագործության վրա, ակնկալելով հրապարակային կամ այլ ձեւաչափով դատապարտող հայտարարություն՝ Ադրբեջանի հակամարդկային գործողությունների վերաբերյալ, ինչպես նաեւ կանխարգելիչ քայլերի իրականացում՝ զսպելու Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումները:

Ադրբեջանը պետք է պատժվի իր շարունակական հանցանքների համար»:

ԱՎԻՆՅԱՆ, ԹԵ՞ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Երեւանի ավագանու ընտրություններն արդեն անցյալում են: Ընտրությունների արդյունքներով՝ անցողիկ շեմը հաղթահարել է 5 քաղաքական ուժ՝ «Քաղաքացիական պայմանագիր», «Ազգային առաջընթաց», «Հանրապետություն», «Հանրային ձայն» կուսակցություններն ու «Մայր Հայաստան» դաշինքը:

«Ժողովուրդ» օրաթերթը առանձնացրել եւ ներկայացնում է, թե որ քաղաքական ուժը որ վարչական շրջանում է ավելի ուժեղ եղել: Այսպիսով, ՔՊ-ն, որը այս ընտրություններում ստացել է 32,6 տոկոս ձայն, ամենից շատ՝ 46,9 տոկոս ձայն ստացել է Նորք-Մարաշ վարչական շրջանում, հաջորդը՝ Նուբարաշենն է՝ 46,4 տոկոս ձայներով: Ամենից քիչ ձայն այս ուժը ստացել է Արաբկիրում՝ ձայների 25,5 տոկոս:

«Ազգային առաջընթաց» կուսակցությունն այս ընտրություններում ստացել է 18,9 տոկոս ձայն: Այսպիսով, Հայկ Մարությանի գլխավորած ուժը ամից շատ՝ 20 տոկոս ձայն ստացել է Նոր Նորքում, ապա հաջորդում է Ավանը՝ 19,8 տոկոս ձայնով, իսկ ամենաքիչ ձայները Նուբարաշենում են՝11,7 տոկոս: Երրորդ տեղը զբաղեցրած Անդրանիկ Թեւանյանի «Մայր Հայաստան» դաշինքն այս ընտրություններին ստացել է 15,4 տոկոս ձայն: Նրանք ուժեղ են գտնվել Արաբկիրում՝ 19,7 տոկոս ձայն, եւ թույլ՝ Նուբարաշենում՝ 9,6 տոկոս ձայն:

ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔ՝ ՀԻՆ ԳՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ձախողած մրցույթների պատճառով գրքեր չեն տպվել: 2023-2024 թվականի ուսումնական տարին մեկնարկեց տհաճ անակնկալներով, եւ ուսումնական տարին արդեն 3 շաբաթ շարունակվում է առանց դասագրքերի: Ծնողները, աշակերտները եւ ուսուցիչները դժգոհում են, իսկ նախարարությունը, մի խնդիրը չլուծած, հայտարարում է մեկ այլ մրցույթ՝նոր դասագրքերի տպագրության համար:

ArmLur.am-ը ահազանգ է ստացել, որ Երեւանի համար 168 հիմնական դպրոցի ծնողները որոշել են ստորագրահավաք անցկացել եւ պահանջել՝գոնե հին գրքեր տրամադրեն:

Դպրոցի տնօրեն Գոհար Մելիք-Ստեփանյանը մեզ տեղեկացրեց, որ ինքը տեղյակ չէ որեւէ ստորագրահավաքի մասին, իրեն նման դիմում չի տրվել, իսկ դասագրքերի հետ կապված խնդրի եւ դրա լուծումների վերաբերյալ խնդրեց դիմել Երեւանի քաղաքապետարանի իրավասու վարչություն:

ԱՐՁԱԳԱՆՔ՝ ԱՐՑԱԽԻՑ

«Կոչերով անհնար է զսպել Ադրբեջանի նման ռազմատենչ եւ հանցավոր կեցվածքը»,- «Ժողովուրդ» օրաթերթին տված արձագանքում նշել է Արցախի ԱԳ նախարար Սերգեյ Ղազարյանը:

«Վերջին շրջանում ամենօրյա ռեժիմով ադրբեջանական կողմը իրականացրել է բանակային տեղաշարժեր եւ տարբեր զինատեսակների կուտակումներ, որոնք ուղեկցվել են ինտենսիվ տեղեկատվական-քարոզչական աշխատանքներով՝ հող նախապատրաստելով Արցախի դեմ լայնածավալ ագրեսիայի համար:

Արցախյան կողմը շարունակաբար բոլոր դերակատարներին նախազգուշացրել է 2020 թ. պատերազմից հետո Ադրբեջանի կողմից աննախադեպ ռազմական ուժի կուտակումների անհերքելի փաստի եւ հնարավոր սադրանքների մասին, այդ թվում՝ լայնամասշտաբ ռազմական գործողությունների կանխման ակնկալիքով:

Ինչպես տեղյակ եք, վերջին 24 ժամվա ընթացքում ադրբեջանական կողմը ապատեղեկատվություն է տարածել, որ, իբր թե, արցախյան կողմը դիվերսիոն գործողությունների է իրականացրել, հրետակոծության ենթարկել ադրբեջանական դիրքերը:

Իսկ քիչ անց նրանք տարածել են տեղեկատվություն, որ սկսել են այսպես կոչված «հակաահաբեկչական գործողություն», ինչը վկայում է նրա մասին, որ այս բոլոր քայլերը նախապես ծրագրավորված են եղել: Սա լրիվությամբ տեղավորվում է վերջին ամիսների ընթացքում հայկական կողմի՝ Արցախի եւ նրա ժողովրդի նկատմամբ Ադրբեջանի ցեղասպանական գործողությունների մասին հաղորդումներին:

Այժմ մենք ականատեսն ենք, թե ինչպես է Ադրբեջանը իր ցեղասպան քաղաքականության իրականացման գործում անցնում խաղաղ բնակչության ֆիզիկական բնաջնջմանը եւ քաղաքացիական օբյեկտները ոչնչացնելու գործողություններին:

Միջազգային դերակատարներին բազմիցս հայտնել ենք, որ կոչերով անհնար է զսպել Ադրբեջանի նման ռազմատենչ եւ հանցավոր կեցվածքը: Մենք պահանջում ենք, որ միջազգային հանրությունը շատ կարճ ժամանակահատվածում գործուն քայլեր ձեռնարկի Ադրբեջանի ագրեսիան դադարեցնելու համար»,- նշվում է նախարարի արձագանքում:

ՀԱՅՏԱՐԱՐԵՑ

ԱԴՐԲԵՋԱՆ ՈՒ ԿԵՂԾ ԹԵԶԵՐԸ

ՀՀ ԱԳՆ-ն հայտարարություն է տարածել Ադրբեջանի շրջանառած կեղծ թեզերի վերաբերյալ:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ դրանում, մասնավորապես, ասված է, որ սեպտեմբերի 18-ին՝ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունում դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ, ադրբեջանական կողմի ներկայացրած թեզերը տարածաշրջանում նոր ռազմական էսկալացիա ծավալելու, Լեռնային Ղարաբաղում էթնիկ զտումներ իրականացնելուն ուղղված կոնկրետ գործողություններ սկսելու դիվանագիտական նախապատրաստության են նման:

«Ադրբեջանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետների հետ հանդիպման ժամանակ ադրբեջանցի պաշտոնյաների խոսույթը Լեռնային Ղարաբաղում էթնիկ զտումների եւ Հայաստանի դեմ ագրեսիայի քաղաքականության իրականացման գործում միջազգային հանրությանը «համապատասխանատու» կարգելու նպատակ ունի, ինչն անընդունելի է:

Վերոհիշյալ հանդիպման ժամանակ Ադրբեջանի ներկայացուցիչները պնդել են, թե Հայաստանի Հանրապետությունը մերժում է լարվածության թուլացմանն ուղղված բոլոր առաջարկները: Անհասկանալի է, թե ինչ առաջարկների մասին է խոսում Ադրբեջանը, եւ օտարերկրյա դիվանագետների հետ հանդիպման մասին հաղորդագրության մեջ տվյալ հարցը պարզաբանված չէ: Հարկ ենք համարում նշել, որ Հայաստան-Ադրբեջան պետական սահմանից զորքերի հայելային ետքաշման առաջարկը շարունակում է մնալ ուժի մեջ, եւ Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է օր առաջ ներգրավվել դրա իրականացման շուրջ քննարկումներում»,- տեղեկացնում են ԱԳՆ-ից:

Ադրբեջանի պնդումները, թե Հայաստանի Հանրապետությունը Լեռնային Ղարաբաղի տարածքում ստեղծել է վարչակարգ, իրականության հետ որեւէ աղերս չունեն. «Հայաստանի Հանրապետության աջակցությունը Լեռնային Ղարաբաղին ունի հումանիտար բնույթ, ինչի անհրաժեշտությունը ավելի է ընդգծվում Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով ծավալվող հումանիտար ճգնաժամով: Հայաստանի Հանրապետությունը ողջունում է երկարատեւ դադարից հետո հումանիտար առաջին բեռների մուտքը Լեռնային Ղարաբաղ եւ հույս ունի, որ այն շարունակական ու կայուն բնույթ կկրի:

Միեւնույն ժամանակ հարկ ենք համարում ընդգծել, որ Լաչինի միջանցքի՝ 9 ամիս շարունակվող արգելափակումը 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության եւ Արդարադատության միջազգային դատարանի փետրվարի 22-ի եւ հուլիսի 6-ի իրավաբանական պարտադիր ուժ ունեցող որոշումների կոպտագույն խախտում է:

Չէին լինի Հայաստանի, միջազգային գործընկերների, անգամ Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղին հումանիտար աջակցություն տրամադրելու պատրաստակամության մասին հայտարարությունները, եթե ինքը՝ Ադրբեջանը, իր ապօրինի գործողություններով չստեղծեր հումանիտար ճգնաժամը Լեռնային Ղարաբաղում եւ չխոչընդոտեր ՄԱԿ կառույցների եւ այլ միջազգային գործընկերների մուտքը Լեռնային Ղարաբաղ»:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ԱԳՆ-ից հայտնում են, որ, Լաչինի միջանցքի արգելափակմանը զուգահեռ, Ադրբեջանը խափանել է գազի եւ էլեկտրականության մատակարարումները դեպի ԼՂ, ինչն ակնհայտ է դարձնում, որ միջանցքի արգելափակման ադրբեջանական խոսույթը կեղծ է. եթե Ադրբեջանը Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակումը բացատրում է միջանցքով դեպի Լեռնային Ղարաբաղ զենք եւ ռազմամթերք տեղափոխելու մասին կեղծ լուրերով, անհասկանալի է, թե էլեկտրագծերով էլ ինչ է հնարավոր տեղափոխել, բացի էլեկտրական էներգիայից, եւ գազամուղով էլ ինչ է հնարավոր տեղափոխել, բացի բնական գազից:

«Ինչ վերաբերում է ԼՂ-ում ՀՀ բանակի առկայության վերաբերյալ ադրբեջանական պնդումներին, կրկին ընդգծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը Լեռնային Ղարաբաղում բանակ չունի, իսկ Հայաստանի կողմից Ադրբեջանի տարածքում ականապատում իրականացնելու կեղծ պնդումները հերքվել են Արդարադատության միջազգային դատարանի ս/թ փետրվարի 22-ի որոշումով:

Հարկ ենք համարում կրկին ընդգծել, որ Հայաստանի Հանրապետությունը վերահաստատում է իր հավատարմությունը խաղաղության օրակարգին, ինչպես նաեւ 2022թ. հոկտեմբերի 6-ի Պրահայի եւ 2023թ. մայիսի 14-ի Բրյուսելի պայմանավորվածություններին: Մտահոգությամբ ենք արձանագրում, որ պաշտոնական Բաքուն մինչեւ օրս հրապարակային կերպով չի հաստատել իր հավատարմությունը մասնավորապես 2023թ. մայիսի 14-ի բրյուսելյան պայմանավորվածություններին, ինչը տարածաշրջանում լարվածության առանցքային գործոն է:

Ադրբեջանի նկատառումները Հայաստանի ռազմական կարողությունների զարգացման մասին նույնպես անհասկանալի են: Հայաստանի Հանրապետությունը բազմիցս հայտարարել է, որ հարեւանների նկատմամբ ագրեսիվ գործողություններ ձեռնարկելու որեւէ մտադրություն չունի, իսկ ռազմական ոլորտի բարեփոխումները սեփական տարածքային անվտանգությունն ապահովելու նպատակ ունեն:

Ինչ վերաբերվում է Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակին, լարվածության թուլացման միջոցը տեսնում ենք Բաքու-Ստեփանակերտ երկխոսությունը եւ հույս ունենք, որ տարածաշրջանի կայունությամբ հետաքրքրված մեր միջազգային գործընկերները հավելյալ միջոցներ կձեռնարկեն նման երկխոսության հուսալի մեխանիզմներ ստեղծելու համար»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՐՑԱԽԻՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

Սեպտեմբերի 19-ին ԱՀ առողջապահության նախարարության «Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից 7 բուժառու ուղեկցողների հետ միասին անհետաձգելի մասնագիտացված բժշկական օգնություն ստանալու համար Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ տեղափոխվել են ՀՀ մասնագիտացված բժշկական կենտրոններ: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են Արցախի առողջապահության նախարարությունից:

Նշենք, որ «Արեւիկ» բուժմիավորումում այս պահին ստացիոնար բուժում է ստանում 28 երեխա, 6-ը գտնվում է նորածնային եւ վերակենդանացման բաժանմունքում:

«Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ստացիոնար բուժում է ստանում 67 հիվանդ, 7 բուժառու գտնվում է վերակենդանացման բաժանմունքում, որից 4-ը՝ ծայրահեղ ծանր վիճակում:

ԱՐՑԱԽՈՒՄ ԼԱՐՎԱԾ Է

Արցախում սկսել են տեղային հակաահաբեկչական միջոցառումներ ադրբեջանցի զինծառայողների անվտանգությունն ապահովելու եւ Ադրբեջանի սահմանադրական կարգը վերականգնելու նպատակով: Այս մասին հայտարարություն է տարածել Ադրբեջանի ՊՆ-ն:

Նշվում է, որ ընթացիկ գործունեությունների մասին տեղեկացված են ՌԴ խաղաղապահ կոնտինգենտի ղեկավարությունը եւ Աղդամում գտնվող ռուս-թուրքական մոնիթորինգային կենտրոնի ղեկավարությունը:

«Գերճշգրիտ զենքերով հարվածներ են հասցվելու առաջնագծի երկայնքով, եւ խորքում շարքից հանվելու են հայկական զինված ուժերի դիրքերը, նրանց հեռահար կրակային կետերը, ռազմական միջոցները եւ ռազմական նշանակության օբյեկտները», - ասված է հաղորդագրության մեջ:

Հիշեցնենք, որ երեկ՝ կեսօրից, Արցախում տագնապ էր, եւ կրակում էին Ստեփանակերտի ուղղությամբ:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՋԻՆՎԱԾ ՄԻՋԱԴԵՊ՝ ՎԱՆԱՁՈՐՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ 2023 թվականի օգոստոսի 31-ին՝ ժամը 16:15-ին, անհայտ քաղաքացուց ահազանգ է ստացվել՝ Վանաձոր քաղաքի Երեւանյան խճուղում կրակոցների վերաբերյալ: Նույն օրը՝ ժամը 16:51-ին, հաղորդում է ստացվել նաեւ «Վանաձոր բժշկական կենտրոն»-ից այն մասին, որ «ձախ ազդրի դաստրված վերք, օտար մարմին» ախտորոշմամբ իրենց մոտ բուժօգնության է տեղափոխվել Վանաձոր քաղաքի 29-ամյա բնակիչ Արթուր Ալ.-ն: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են ՀՀ ՔԿ-ից:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում, ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում երիտասարդը ճանաչվել է տուժող:

Նախաքննության ընթացքում իրականացված քննչական եւ վարութային անհրաժեշտ գործողությունների արդյունքում պարզվել են դեպքի՝ էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ շարժառիթը, միջադեպին մասնակիցների շրջանակը:

Ըստ ձեռք բերված փաստական տվյալների՝ Վանաձոր քաղաքի բնակիչ Ալիկ Հ.-ն, լարված, անբարյացակամ փոխհարաբերությունների մեջ է գտնվել Եղեգնուտ գյուղի բնակիչ Արշակ Առ.-ի հետ՝ ավտոմեքենան վերջինիս եղբորորդու՝ Արթուր Առ.-ի վարած ավտոմեքենայի ուղղությամբ վարելու, իրեն ու ընկերոջը՝ Նարեկ Հ.-ին, հայհոյելու, ինչպես նաեւ անձնական այլ հարցի պատճառով:

Այս կապակցությամբ վրեժխնդիր լինելու շարժառիթով Ալիկ Հ.-ն խմբով, Նարեկ Հ.-ի եւ դեռեւս ինքնությունը չպարզված անձի հետ նախնական համաձայնությամբ, 2023թ. օգոստոսի 31-ին Վանաձոր քաղաքի Երեւանյան խճուղում գտնվող սգո սրահի մոտ դարանակալել եւ սպասել է Արշակ Առ.-ին՝նպատակ ունենալով վերջինիս ապօրինաբար կյանքից զրկելու:

Տեսնելով, որ վերջինս իր ընկերոջ՝Արթուր Ալ.-ի եւ եղբոր որդու՝ Արթուր Առ.-ի հետ դուրս է գալիս սգո սրահի տարածքից՝ դեռեւս ինքնությունը չպարզված անձի կողմից վարած «BMW» մակնիշի ավտոմեքենայով Նարեկ Հ.-ի հետ մոտեցել են նրան պատկանող ավտոմեքենային եւ, իրական վտանգի տակ դնելով նաեւ այդ պահին սգո սրահից դուրս եկող բազմաթիվ անձանց կյանքն ու առողջությունը, երկուսով «Մակարով» եւ «SS» տեսակի ատրճանակներից կրակոցներ են արձակել Արշակ Առ.-ի ուղղությամբ՝հրազենային վնասվածք պատճառելով Արթուր Ալ.-ին, ինչպես նաեւ վնասելով դեպքի վայրում կայանված «Nissan Teana» մակնիշի ավտոմեքենան, որի սրահում գտնվել է ավտոմեքենայի սեփականատերը:

Արշակ Առ.-ն՝ ատրճանակից, վերջինիս եղբոր որդին՝ Արթուր Առ.-ն, ինքնաձիգից կրակոցներ են արձակել, իսկ Արթուր Ալ.-ն ռազմամթերք չհանդիսացող ձայնային պայթուցիչ է նետել Ալիկ Հ.-ի եւ Նարեկ Հ.-ի ուղղությամբ, ինչի արդյունքում վերջիններս իրենցից անկախ հանգամանքներում չեն կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել:

Նախաքննության ընթացքում նշանակվել են մի շարք փորձաքննություններ, այդ թվում՝դատաբժշկական, դատաձգաբանական, դատապայթյունատեխնիկական, դատանյութաբանական եւ դատահետքաբանական:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ չորս անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդումներ են հարուցվել:

Ալիկ Հ.-ին եւ Նարեկ Հ.-ին մեղադրանք է ներկայացվել:

Նախաքննությունը շարունակվում է, ձեռնարկվում են անհրաժեշտ վարութային եւ քննչական գործողություններ, ինչպես նաեւ օպերատիվ-հետախուզական եւ օպերատիվ-որոնողական միջոցառումներ՝ ապօրինի զենքերի ձեռք բերման աղբյուրը պարզելու, դրանք հայտնաբերելու, «BMW ավտոմեքենայի վարորդի ինքնությունը, վերջինիս եւ մեղադրյալների գտնվելու վայրերը պարզելու, նրանց հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու ուղղությամբ:

ՈՒՇԱԳՐԱՎ

ԹԱԼԱՆԵԼ ԵՆ, ԲՌՆԱԲԱՐԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ուշագրավ դեպք է տեղի ունեցել Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում:

1995 թվականին ծնված՝ Հրազդան քաղաքի բնակիչը դանակը դրել է Երեւանի 46-ամյա բնակչուհու պարանոցին եւ պահանջել իրեն տրամադրել բջջային հեռախոսները, ոսկյա մատանին, որից հետո, դանակը կնոջ մեջքին պահելով, բռնաբարել է ու դիմել փախուստի:

Իրավապահները բռնել են 28-ամյա տղային ու ձերբակալել:

ԳՈՐԾ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ

Մանկապարտեզի սաների նկատմամբ բռնության դեպքով քրեական վարույթ է նախաձեռնվել:

Ինչպես արդեն «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, սեպտեմբերի 16-ին համացանցում հրապարակվել էր տեսանյութ, որում երեւում է, թե ինչպես են մանկապարտեզի աշխատակիցները բռնության ենթարկում սաներին:

Ըստ սոցցանցային գրառումների՝ այդ մանկապարտեզը մասնավոր է, որտեղ ամսական վճարն 90.000 դրամ է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿՐԱԿՈՑՆԵՐ՝ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

Սյունիքի մարզում սեպտեմբերի 17-ին կրակոցներ են հնչել. հաղորդում է Shamshyan.com-ը:

Ոստիկանության Կապանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները պարզել են, որ ստացված տեղեկությունը հավաստի է, եւ կրակոցներ արձակողը նույն թաղամասի բնակիչ, 40-ամյա Ալեքսեյ Գ.-ն է:

Ոստիկանները հայտնաբերել են վերջինիս եւ պարզել, որ նույն օրը՝ժամը 17:50-ի սահմաններում, «Կավարտ» թաղամասի իր տան բակում «Դավիթ Բեկ» թաղամասի բնակիչներ 45-ամյա Դավիթ Ա.-ն, 20-ամյա Գոռ Ա.-ն եւ 18-ամյա Շանթ Ա.-ն անձնական հարցերի շուրջ վիճաբանել են Ալեքսեյ Գ.-ի հետ, որի ընթացքում, ըստ օպերատիվ տեղեկությունների, ծեծի են ենթարկել նրան, ու դրանից հետո Ալեքսեյ Գ.-ն իր մոտ ապօրինի պահվող «ԱԿՄ» տիպի ինքնաձիգից նրանց վախեցնելու համար դեպի օդ կրակոցներ է արձակել:

Քննիչների բացատրական աշխատանքների արդյունքում Ալեքսեյ Գ.-ն ներկայացրել է հանցագործության գործիք ինքնաձիքը՝ 2 պահեստատուփով, որոնցից մեկը լիցքավորված է եղել 8 հատ 7.62 մմ տրամաչափի փամփուշտներով:

Դեպքի փաստով Սյունիքի մարզային քննչական վարչությունում «խուլիգանություն» հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ոստիկանությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Դավիթ, Գոռ եւ Շանթ Ա.-երին հայտնաբերելու ուղղությամբ:

Կայքի տեղեկություններով՝ Գոռ եւ Շանթ Ա.-երը հարազատ եղբայրներ են, իսկ Դավիթ Ա.-ն նրանց հայրն է:

ԿԱՐԵՎՈՐ

ԿՐԱԿՈՑՆԵՐ՝ ՆԾԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ

Սեպտեմբերի 16-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Վայոց ձորի մարզում. ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության քրեական հետախուզության բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ սեպտեմբերի 16-ին «Նորավանք» եկեղեցական համալիրում կրակոցներ են հնչել. հաղորդում է Shamshyan.com-ը L:

Ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության ծառայողները պարզել են, որ կրակոցները արձակել է Վայոց ձորի մարզի բնակիչ, 24-ամյա Հրաչյա Ալոյանը իր նշանադրության արարողության ժամանակ:

Նա, հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով, իր անձի առավելությունը ընդգծելու մոլուցքով տարված, իր մոտ ապօրինի պահվող ինքնաձիգից կրակոցներ է արձակել դեպի օդ՝ խաթարելով համալիրի տարածքում գտնվող անձանց անդորրը:

Վայոց ձորի ոստիկանությունում նաեւ օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ նա գտնվում է Երեւան քաղաքում, եւ ոստիկանները Արշակունյաց պողոտայում հայտնաբերել են նրան եւ տեղափոխել ոստիկանության Եղեգնաձորի բաժին:

Պարզվել է նաեւ, որ նշված դեպքը տեսանկարահանվել եւ հրապարակվել է Instagram սոցիալական կայքում:

Ձեռնարկվում են նաեւ միջոցառումներ ինքնաձիգը հայտնաբերելու եւ դեպքի հանգամանքները ամբողջական պարզելու ուղղությամբ:

ԵՌՄԱՆ ՔՈՒՐՆ ՈՒ ԵՐԵԽԱՆ

Արտակարգ դեպք է տեղի ունեցել Շիրակի մարզում: «Արթիկ» բժշկական կենտրոնից ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Արթիկի բաժին ահազանգ է ստացվել, որ «իրանի եւ վերին վերջույթների 2-րդ եւ 3-րդ աստիճանի ջերմային այրվածք» ախտորոշմամբ իրենց մոտ մոր ուղեկցությամբ բուժօգնության է տեղափոխվել երեխա:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, հիվանդանոց է մեկնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արթիկի բաժնի օպերատիվ խումբը:

Արդեն տեղում ոստիկանները պարզել են, որ երեխան Շիրակի մարզի գյուղերից մեկի բնակիչ, 1-ամյա Մարինկա Հ.-ն է, իսկ նրա մայրը հայտնել է, որ երեխան նույն օրը՝ժամը 15:30-ի սահմաններում, իրենց տան ննջասենյակում խաղալու ժամանակ հատակին դրված եռացրած ջրով դույլը քաշել, շրջել է, ինչի հետեւանքով ջուրը լցվել է երեխայի վրա:

Դեպքի փաստով ոստիկանության Արթիկի բաժնում ձեւակերպվել են փաստաթղթեր, որոնք փոխանցվել են Հայաստանի քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի եւ Անիի քննչական բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 18-ից 19-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 42 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԿՆՈՋ Է ԾԵԾԵԼ

Իջեւան համայնքի Սեւքար գյուղի բնակիչները հայտնեցին, որ սեպտեմբերի 15-ին արտառոց դեպք է տեղի ունեցել Սեւքարի անտառտնտեսության շենքի բակում: Անտառտնտեսություն է գնացել Սեւքար գյուղի բնակիչ, 1976 թվականին ծնված Վահան Վարդանյանը եւ հնարած առիթներով վեճի բռնվել Սեւքարի անտառտնտեսության տնօրենի պահպանության գծով տեղակալ Անահիտ Հովսեփյանի հետ. նրան մեղադրել է այն բանի համար, որ Անահիտի պատճառով իր եղբորը՝ նույն անտառտնտեսության անտառապահին, ազատել են պաշտոնից: Իրականում Վահան Վարդանյանի եղբայրը շարունակում է այդ անտառտնտեսությունում աշխատել, նա ազատված չէ: Վահան Վարդանյանն անտառտնտեսություն իրենց գործերով այցելածների ու անտառտնտեսության մի քանի աշխատակիցների ներկայությամբ անհիմն հայտարարել է, թե, իբր, Անահիտը ձայնագրում է իրենց խոսակցությունը, փորձել է 44-ամյա կնոջից խլել նրա հեռախոսը: Վ. Վարդանյանը բռունցքով ուժգին հարված է հասցրել Անահիտի ձախ ականջախեցուն, որի հետեւանքով նրա ականջօղը պոկվել կորել է, ոսկե ականջօղը հետո անտառտնտեսության աշխատողը գտել է, հանձնել Անահիտ Հովսեփյանին: Վահան Վարդանյանը նաեւ երկու անգամ ուժգին հարվածել է Անահիտի գլխին, սեռական հայհոյանքներ տվել նրա հասցեին: 23 տարի Սեւքարի անտառտնտեսությունում անբասիր աշխատած, ԱԻՆ-ի պատվոգրով պարգեւատրված, այս տարի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի շնորհակալագրին արժանացած Անահիտ Հովսեփյանը շոկային վիճակում, իր ավտոմեքենայով Սեւքար գյուղից մի կերպ հասել է Իջեւան, դիմել ԱԱԾ, որտեղից նրան ուղարկել են ոստիկանություն: Քրեական գործ է հարուցվել բավական մեղմ հոդվածով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195 հոդվածի 1-ին մասով («Ֆիզիկական ներգործությունը»): Սեւքարի բնակիչները կարծիք հայտնեցին, որ Վահան Վարդանյանին նման մեղմ հոդվածով մեղադրանք առաջադրելը կապված է այն բանի հետ, որ նա Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի մոր քեռու տղան է: Որպես լրագրող Անահիտ Հովսեփյանին վաղուց եմ ճանաչում, զանգահարեցի նրան, նա հաստատեց իր հետ կատարվածը, ասաց, որ հոգեպես վատ վիճակում է: Սեւքարի բնակիչները հայտնեցին, որ Վահան Վարդանյանը Սեւքարի անտառտնտեսության անտառներում հատատեղ ունի, ծառահատումներ է կատարում. Անահիտ Հովսեփյանի հետ հաշվեհարդարը կապված է այն բանի հետ, որ նա խոչընդոտում, կանխում է Սեւքարի անտառտնտեսության անտառներում անօրինական հատումները: Ծեծով, սեռական հայհոյանքներով ցանկանում են հասնել այն բանին, որ նա պաշտոնից ազատվի:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԱՐՑԱԽԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՎԻԵՏՆԱՄՈՒՄ

Վիետնամում՝ Հանոյում անցկացվող Միջխորհրդարանական միության երիտասարդ դատգամավորների 9-րդ գլոբալ համաժողովին մասնակցել է աշխարհի 179 երկիր: Կառույցում ՀՀ ԱԺ դատվիրակության անդամ Հասմիկ Հակոբյանը խորհրդարանականներին ներկայացրել է Լեռնային Ղարաբաղում առկա իրավիճակը: Այդ մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են ԱԺ-ից:

«Մենք՝ որպես երիտասարդ խորհրդարանականներ, հավաքվել ենք՝ մասնակցելու քննարկումների, որոնք կարեւոր նշանակություն ունեն մեզնից յուրաքանչյուրի համար:

Ներկայումս մարդկային արարումներն ամբողջովին ձեւավորվում են թվային վերափոխման եւ նորարարության միջոցների շնորհիվ՝ դրանք անփոխարինելի դարձնելով մեր առօրյա կյանքում եւ մասնագիտական ոլորտում: Այս նստաշրջանին մասնակցելով՝ մենք ուշադրությունն ուղղում ենք մշակութային բազմազանության խթանման կարեւորագույն թեմային՝ որպես կայուն զարգացման հիմքում ընկած հիմնարար հենասյուն:

Այսօր մշակութային բազմազանության իրացումը մնում է դժվար հասանելի նպատակ բազմաթիվ տարածաշրջաններում, մասնավորապես՝ հակամարտությունների գոտիներում: Դրա օրինակներից մեկն է Լեռնային Ղարաբաղում ընթացող հակամարտությունը, որտեղ բնակչությունը զրկված է կրթության հիմնարար իրավունքից: Հետեւաբար, հրամայական է, որ մենք ընդգծենք բոլորի համար կրթության համընդհանուր հասանելիության ապահովման կարեւորությունը նույնիսկ նման դժվարին հանգամանքներում:

Covid-19-ից հետո ավելի ու ավելի դժվար է դարձել կրթությունը պատկերացնել առանց թվային տեխնոլոգիաների ինտեգրման:

Ցավոք, իրադրությունն ավելի է սրվում Ղարաբաղում բնակվող 20 000 սովորողների համար, որտեղ նրանց հասանելիությունն այս կարեւոր թվային ռեսուրսներին սահմանափակված է Ադրբեջանի կողմից:

Ցավով եմ հայտնում այն մտահոգող փաստը, որ 2022 թվականի դեկտեմբերից սկսած՝ արդեն ինը երկար ամիսներ, Ադրբեջանը շրջափակման է ենթարկել 120 000 էթնիկ հայերի՝ զրկելով նրանց կենսական անհրաժեշտության սնունդից, առաջին անհրաժեշտության դեղորայքից եւ վառելիքից: Ավելին՝ այդ մարդիկ դիմանում են գազի, էլեկտրաէներգիայի եւ ինտերնետ ծառայությունների պարբերական ընդհատումներին: Այս իրավիճակը ոչ միայն կրթության իրավունքի լուրջ խախտում է, այլ նաեւ խաթարում է կայուն զարգացման եւ մշակութային բազմազանության սկզբունքները:

Թվային վերափոխման այս դարաշրջանում, երբ տեղեկատվությունը հասանելի է համընդհանուր մաշտաբով, հուսահատեցնող է Լեռնային Ղարաբաղի երիտասարդության կայուն զարգացման խոչընդոտին ականատես լինելը:

Սա իրականություն է ժամանակակից աշխարհում, որը միջազգային ուշադրության, կարեկցանքի եւ հավաքական գործողությունների կոչ է անում՝ այս անարդարությունը շտկելու եւ տուժածների ապագան պաշտպանելու համար»,- նշել է Հասմիկ Հակոբյանը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՐԱՍՏ Է ԲԱՆԱԿՑԵԼՈՒ

Արցախի շուրջ սրման ֆոնին՝ ԵՄ-ն հայտարարել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ երկխոսությանն աջակցելու պատրաստակամության մասին:

Հիշեցնենք, որ Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները շարունակում են տարբեր զինատեսակներից կրակը շփման գծի երկայնքով: Այս ամենին զուգահեռ՝ ադրբեջանական կայքերը շարունակում են կեղծ լուրերի շրջանառությունը, թե, իբր, սեպտեմբերի 19-ին հայկական զինված ուժերն իրականացրել են մի շարք լայնածավալ ռազմական սադրանքներ եւ ահաբեկչական հարձակումներ:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄՐՑՈՒՅԹ ԵՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ

Սեպտեմբերի 6-ին ԿԳՄՍՆ-ն հայտարարել է գրքերի տպագրության համար նոր մրցույթներ:

«Ժողովուրդ» օրաթերթը հարցում է ուղարկել նախարարություն՝ հետաքրքրվելով, թե ինչի համար են նոր մրցույթները, եւ որքանով է ճիշտ հայտարարել նոր մրցույթներ այն դեպքում, երբ նախորդները ոչ նախատեսված ժամանակի են կատարվել, ոչ արդյունավետ են եղել:

Նախարարությունից մեզ պատասխանել են. «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը սույն թվականի սեպտեմբերի 6-ին հայտարարել է նոր դրամաշնորհային մրցույթներ, Հանրակրթության պետական նոր չափորոշչով պայմանավորված, 3-րդ, 6-րդ, 8-րդ դասարանների հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման, ինչպես նաեւ 2-րդ, 5-րդ, 7-րդ եւ 10-րդ դասարանների բացակա դասագրքերի համար»:

Այսինքն՝ նախարարությունը միայն սեպտեմբերի 6-ին է հասկացել, որ բացակա գրքերի համար նոր դրամաշնորհային մրցույթներ են պետք:

Նախարարությունը լռում է, ծնողները՝ բողոքում, որ դասագրքեր չկան: Ուսուցիչները բողոքում են ստեղծված նոր Ezis համակարգի, ցածր աշխատավարձի, քայքայված կրթական ոլորտի դեմ:

Իսկ այս ընթացքում Ժաննա Անդրեասյանն ԱԺ ամբիոնից խնդրում է, որ այս գործընթացները ձախողված չհամարենք:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 27 ճՏՊ. 27 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԽՆԴԻՐՆԵՐ

ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՐՑԸ ԿԼՈՒԾՎԻ

Ստեփանավան համայնքում 2023 թվականի սուբվենցիոն ծրագրերով իրականացվող շինաշխատանքները լայն թափով շարունակվում են: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են ՏԿԵ նախարարությունից:

Պետություն-համայնք ներդրմամբ իրականացվում են Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատի վերանորոգման աշխատանքները՝ 212.791.958 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, որից 50 %-ը հատկացրել է պետությունը, 50 %-ը՝ համայնքը: Արված է աշխատանքների 40 %-ը: Այս ծրագրով կլուծվի նաեւ մշակույթի պալատի կարեւոր խնդիրներից մեկը՝ ջեռուցման հարցը:

Ջեռուցման հարց կլուծի նաեւ սուբվենցիոն մեկ այլ ծրագրով Ստեփանավան համայնքի Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր բնակավայրերում, եւ Ստեփանավան համայնքի 4-րդ միկրոշրջան թաղամասում կիրականացվի գազաֆիկացումը:

Ծրագրի արժեքը կազմել է 495.495.764 ՀՀ դրամ, որից 40 % ներդրել է համայնքը, 60 %՝ պետությունը: Մինչ այժմ աշխատանքներն իրականացվել են 45 %-ով:

Այս տարի ձմեռն ավելի տաք կդիմավորեն ռումինական թվով 3, 2, 16 եւ 22 շենքերի բնակիչները: Այստեղ սուբվենցիոն ծրագրով իրականացվում է շենքերի էներգաարդյունավետ արդիականացման ռիսկերի նվազեցում. ջերմամեկուսացվում են շենքերի պատերը, վերանորոգվում են տանիքները, շքամուտքերը, փոխվում են մուտքի դռները:

Ծրագրի արժեքն է 218.769.436 ՀՀ դրամ, որից 45 %-ը պետության ներդրումն է, 26 %՝ համայնքի, 5%՝ բնակիչների, եւ 24 %՝ ՄԱԶԾ: Սուբվենցիոն այս ծրագրերի ավարտը նախատեսված է մինչեւ տարեվերջ:

ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ

Երեւանի ավագանու ընտրություններից հետո վերահաշվարկ իրականացվելու է երկու ընտրատեղամասում:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացրեց ԿԸՀ նախագահի մամուլի քարտուղար Սեդա Ղուկասյանը, ԸԸՀ-ն, մասնավորապես՝ թիվ 8 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, վերահաշվարկի մեկ դիմում է ստացել «Ազգային Առաջընթաց» կուսակցությունից՝ 8/1 տեղամասի արդյունքների վերահաշվարկի պահանջով:

«Ընթացակարգի համաձայն՝ վերահաշվարկի պահանջով դիմում պետք է ներկայացվեր սեպտեմբերի 19-ին՝ մինչեւ 11:00-ն: «Մայր Հայաստան» կուսակցության լիազոր ներկայացուցիչը դիմումը ներկայացրել է 11:00-ից հետո, հետեւաբար այն չի ներգրավվել որպես վերահաշվարկի պահանջով դիմում: Այդուհանդերձ, թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ «Մայր Հայաստան» կուսակցության առաջարկած 10/26 ընտրատեղամասում իրականացնելու է վերահաշվարկ»,- ասաց ԿԸՀ նախագահի մամուլի քարտուղարը:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» Գ

ԱՃՈՒՐԴ՝ ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ

2023թ-ի հոկտեմբերի 02-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ՝ հոլանդական եղանակով:

Թիվ 76 լոտ՝ ոսկյա զարդեր՝ 14.3 գր. ընդհանուր քաշով, որից 9,1գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 8 գր.) ոսկյա զարդը՝ 585 հարգի,109,600 ՀՀ դրամ, 5.2գր. քաշով ոսկյա զարդը՝ 958 հարգի,116,800 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 226.400 ՀՀ դրամ: Թիվ 77 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն՝78.4 գր. ընդհանուր քաշով, որից 21.9 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 17.6 գր.) ոսկյա զարդը՝585 հարգի, 241,100 ՀՀ դրամ, 53,8գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 52.3 գր.)՝ 585 հարգ, 716,500 ՀՀ դրամ, 2.7 գր. քաշով ոսկյա ջարդոնը՝585 հարգի, 37.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 994.600 ՀՀ դրամ: Թիվ 78 լոտ՝ ոսկյա զարդ՝ 7.1 գր. քաշով, 958 հարգի, 159.000 ՀՀ դրամ: Թիվ 79 լոտ՝ ոսկյա ջարդոն՝4.3 գր. քաշով, 500 հարգի, լոտի մեկնարկային գինը՝50.300 ՀՀ դրամ: Թիվ 80 լոտ՝ ոսկյա զարդեր՝ 28.5 գր. ընդհանուր քաշով, որից 2.8 գր. քաշով (զուտ քաշը 2 գր.) ոսկյա զարդը՝ 500 հարգի, 23,100 ՀՀ դրամ, 24.4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 24 գր.) ոսկյա զարդերը՝ 585 հարգի, 328,800 ՀՀ դրամ, 1.3 գր. քաշով զարդը՝ 750 հարգի, 22,800 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 374,700 ՀՀ դրամ: Թիվ 81 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն՝ 37.9 գր. ընդհանուր քաշով, որից 29.2 գր. քաշով (զուտ քաշը 27.7 գր.) ոսկյա զարդը՝ 585 հարգի, 379,500 ՀՀ դրամ, 5.3 գր. քաշով ոսկյա ջարդոնը՝ 900 հարգի, 111,800 ՀՀ դրամ, 3.4 գր. քաշով ոսկյա ջարդոնը՝ 750 հարգի, 59,600 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 550,900 ՀՀ դրամ: Թիվ 82 լոտ՝ ոսկյա զարդ՝ 4,1 գր. քաշով, 900 հարգի, լոտի մեկնարկային գինը՝86,500 ՀՀ դրամ: Թիվ 83 լոտ՝ ոսկյա զարդեր՝ 11,8 գր. ընդհանուր քաշով, որից 7,3 գր. քաշով ոսկյա զարդը՝585 հարգի, 100,000 ՀՀ դրամ, 4.5 գր. քաշով ոսկյա զարդը՝ 958 հարգի, 101,000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 201,000 ՀՀ դրամ: Թիվ 84 լոտ՝ ոսկյա զարդ՝ 4.8 գր. քաշով, 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 65.000 ՀՀ դրամ: Թիվ 85 լոտ՝ ոսկյա զարդ՝8,1 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 7,5 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝102,000 ՀՀ դրամ: Թիվ 86 լոտ՝ ոսկյա զարդ՝ 10.8 գր. քաշով, 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 148,000 ՀՀ դրամ: Թիվ 87 լոտ՝ ոսկյա զարդ՝10.5 գր. քաշով, 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 144.000 ՀՀ դրամ: Թիվ 88 լոտ՝ ոսկյա զարդ՝ 8.1գր. քաշով, 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝110,000 ՀՀ դրամ: Թիվ 89 լոտ՝ ոսկյա զարդ՝5,8 գր. քաշով, 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 79,000 ՀՀ դրամ: Թիվ 90 լոտ՝ ոսկյա զարդ եւ ջարդոն՝ 11,1գր. ընդհանուր քաշով, որից 10գր. քաշով ոսկյա զարդը՝585 հարգի, 137,000 ՀՀ դրամ, 1,1 գր. քաշով ոսկյա ջարդոնը՝ 585 հարգի, 15,000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 152,000 ՀՀ դրամ: Թիվ 91 լոտ՝ ոսկյա զարդ՝6.6 գր. քաշով, 958 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 148,000 ՀՀ դրամ: Թիվ 92 լոտ՝ ոսկյա զարդեր՝30.4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 29,4 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 402,000 ՀՀ դրամ: Թիվ 93 լոտ՝ ոսկյա ջարդոն՝ 3,8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 3,3 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 45,000 ՀՀ դրամ: Թիվ 94 լոտ՝ ոսկյա զարդեր՝137,9 գր. ընդհանուր քաշով, որից 7,1գր. քաշով ոսկյա զարդը՝958 հարգի, 159,500 ՀՀ դրամ, 13,7գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 13 գր.)՝500 հարգի, 150,000 ՀՀ դրամ, 117,1 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 115 գր.)՝585 հարգի, 1.575,500 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 1,885,000 ՀՀ դրամ: Թիվ 95 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն՝ 95,9 գր. ընդհանուր քաշով, որից 47գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 46,9 գր.)՝ 900 հարգի, 989,600 ՀՀ դրամ, 48,9 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը եւ ջարդոնը (զուտ քաշը 48,7 գր.)՝585 հարգի, 667,000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 1.656.600 ՀՀ դրամ:

Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը՝ բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/. հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9.00-13.00-ն, ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է՝դիմումի հիման վրա:

Հեռ. 043 00-42-27:

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԿՈՉԸ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Լեռնային Ղարաբաղի վրա ադրբեջանական նոր լայնածավալ հարձակման հետ կապված, հանդես է եկել հայտարարությամբ՝ կոչ անելով միջազգային բոլոր կառույցներին զսպել Ադրբեջանի իշխանություններին ու համարժեք արձագանք տալ այդ երկրի ցեղասպան գործողություններին:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Մայր Աթոռի հայտարարության մեջ մասնավորապես ասվում է. «Խոր անհանգստությամբ տեղեկացանք, որ Ադրբեջանը «հակաահաբեկչական գործողության» իրականացման կեղծ պատճառաբանություններով ռազմական լայնածավալ գործողություններ է սկսել Արցախի նկատմամբ՝ հրետակոծությունների ենթարկելով Արցախի խաղաղ բնակավայրերը, թիրախավորելով մայրաքաղաք Ստեփանակերտը:

Խստորեն դատապարտում ենք Ադրբեջանի հերթական թշնամական այս գործողությունը եւ կոչ անում միջազգային բոլոր կառույցներին զսպել Ադրբեջանի իշխանություններին եւ համարժեքորեն արձագանքել Ադրբեջանի ցեղասպան գործողություններին»:

ԻՆՔՆԱԳԼՈՐՆԵՐԸ՝ ԳԼԽԱՑԱՎԱՆՔ

Մոտ երկու տարի է, ինչ էլեկտրական ինքնագլորներն իրենց հաստատուն տեղն են գրավել Երեւանի փողոցներում: Միկրո-տրանսպորտը ամբողջ աշխարհում մեծ պահանջարկ ունի: Ներմուծման օրից էլեկտրական ինքնագլորների «շեյրինգը» գործում է միայն Երեւանի տարածքում: Այն կարելի է վարձել հատուկ հավելվածների միջոցով, եւ մեկ կիլոմետր ուղեւորության արժեքը սկսվում է 30 դրամից՝ արագությունից կախված:

Ամբողջ խնդիրն այն է, որ ներմուծման օրից էլեկտրական ինքնագլորների վերաբերյալ ոչ մի օրենսդրական կարգավորում չի սահմանվել, իսկ վրաերթից տուժածների թիվն աճում է: Պարզվում է, որ էլեկտրական ինքնագլորների օգտագործման հետ կապված լուրջ խնդիրներ ունի ոչ միայն մայրաքաղաք Երեւանը, այլ նաեւ մի շարք այլ երկրներ:

Օրեր առաջ տեղեկացանք, որ էլեկտրական ինքնագլորների օգտագործումը Փարիզում են արգելել, այժմ էլ Ռուսաստանում են նախատեսում կիրառել խստացումներ: Մասնավորապես, առաջարկվել է ինքնագլորների համար ներդնել համարանիշներ, ինչպես նաեւ ինքնագլոր օգտագործողների հանդեպ որոշակի պատասխանատվություն սահմանել քրեական եւ վարչական իրավախախտումների օրենսգրքերով:

Հիշեցնենք նաեւ, որ վերջին օրերին շատացել են վթարները, քանի որ էլեկտրական ինքնագլորներ սպառողների թվում հիմնականում անչափահաս երեխաներ են:

Այս թեմայի շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց «Մի՛ արեք այսպես» խմբի համահիմնադիր Լեւոն Հարությունյանի հետ, ում խոսքով. «Նախ պետք է սահմանել, թե ինքնագլորը ինչ է, եւ ամենամեծ խնդիրը կայանում է նրանում, որ ներմուծման օրից ինքնագլոր օգտագործողների հանդեպ չի սահմանվել որոշակի պատասխանատվություն»:

«Ժողովուրդ» օրաթերթը հարցում է ուղարկել նաեւ ինքնագլորներ ներկրող JET.AM ընկերությանը. արձագանքի դեպքում նոր մանրամասներ կներկայացնենք:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՐՑԱՆԱԿ

ՀԱՅՏՆԻ ԵՆ «ԱՎՐՈՐԱ»-Ի ՀԵՐՈՍՆԵՐԸ

2024 թ. «Ավրորա» մրցանակին են հավակնում մեռորյա հերոսներ Բահրեյնից, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունից եւ Իրանից: Մրցանակի դափնեկրի անունը կհայտարարվի Լոս Անջելեսում 2024 թ. մայիսին:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության տարածած հաղորդագրությունից, 2024թ. «Ավրորա»-ի հերոսների անունները հայտարարվեին «Քլինթոն» համաշխարհային նախաձեռնության (CGI) ամենամյա միջոցառման ընթացքում: Այս հերոսներից մեկը կդառնա 2024 թ. «Ավրորա» մրցանակի դափնեկիր. շնորհման արարողությունը տեղի կունենա 2024 թ. մայիսին Լոս Անջելեսում (Կալիֆորնիա, ԱՄՆ): 2024 թ. «Ավրորա» մրցանակի դափնեկիրը կստանա 1.000.000 ԱՄՆ դոլար պարգեւ եւ նվիրատվության շղթան շարունակելու եզակի հնարավորություն՝ աջակցելով կարիքի մեջ գտնվող մարդկանց:

«Մենք ուրախ ենք հայտարարել այն երեք բացառիկ անհատների անունները, որոնց ընտրել ենք որպես 2024 թ. «Ավրորա»-ի հերոսներ: Նրանք տարբեր են իրենց կենսափորձով, բայց նրանց միավորում է մարդկությանը ծառայելու նվիրումը: Նրանցից յուրաքանչյուրը ցուցաբերել է արտասովոր խիզախություն եւ նվիրվածություն՝ օգնելով այլոց վտանգավոր իրավիճակներում, մի կողմ դնելով սեփական անվտանգությունն ու բարեկեցությունը»,- ասաց «Ավրորա» մրցանակի ընտրող հանձնաժողովի նախագահ, Լոնդոնի կայսերական քոլեջի Գլոբալ առողջապահական նորարարությունների ինստիտուտի համաղեկավար Լորդ Արա Դարզին:

2024 թ. «Ավրորա»-ի հերոսներն են Աբդուլհադի ալ-Խավաջան (Բահրեյն/Դանիա), Դենիս Մուկվեգե (Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն) եւ Նասրին Սոթուդե (Իրան):

«Այս տարի ստացել ենք ավելի քան 700 հայտ, եւ «Ավրորա» մրցանակի ընտրող հանձնաժողովը պետք է դժվար ընտրություն կատարեր՝ այդ բացառիկ անհատներից առանձնացնելով երեքին,- ասաց «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության համահիմնադիր, Flagship Pioneering ընկերության հիմնադիր եւ գլխավոր գործադիր տնօրեն Նուբար Աֆեյանը:- Այս երեք մարդասերներն անվախ են իրենց գործում՝ անհերեւակայելի հանգամանքներում օգնելով այլոց, եւ մեզ համար պատիվ է աշխարհին պատմել նրանց գործունեության եւ ունեցած ազդեցության մասին»:

2024 թվականին «Ավրորա» մարդասիրական մրցանակի առաջադրումների փուլում, որը տեւեց 2022 թվականի հունիսի 1-ից մինչեւ 2023 թ. մայիսի 31-ը, ներկայացվել է 732 հայտ՝ներառելով 675 հերոսի առաջադրում: Հայտերը ստացվել են 75 երկրից, այդ թվում՝ ԱՄՆ, Քենիա, Հայաստան, Նիգերիա, Գերմանիա, Պակիստան, Կանադա, Հնդկաստան, Մեծ Բրիտանիա, Չեխիա, Վրաստան եւ Իրան:

«Զարմանալիորեն մեծ է մարդասիրական աջակցության կարիքն աշխարհի բոլոր անկյուններում, եւ «Ավրորա»-ի կողմից ճանաչման արժանացած յուրաքանչյուր անհատ շոշափելիորեն փոխում է նրանց կյանքը, ովքեր ամենաշատն ունեն դրա կարիքը, եւ սա ոգեշնչում է մեզ բոլորիս»,- ասաց «Ավրորա» մրցանակի ընտրող հանձնաժողովի անդամ, Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի նախագահ Լուիզ Ռիչարդսոնը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԸՄԲԻՇՆԵՐԸ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում ավարտին մոտեցող ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնությունում Եվրոպայի եռակի չեմպիոն, 57 կգ քաշային Արսեն Հարությունյանը բրոնզե մեդալ է նվաճել՝ վճռորոշ գոտեմարտում 11:0 հաշվով վստահ հաղթանակ տանելով Ղազախստանի ներկայացուցիչ Մեիրամբեկ Կարբաուի նկատմամբ:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ սա Հարությունյանի երրորդ բրոնզե մեդալն էր աշխարհի առաջնություններում:

Հայ ըմբիշը նաեւ Փարիզում կայանալիք 33-րդ ամառային օլիմպիական խաղերի ուղեգիր է նվաճել: Մինչ այս Հայաստանից ՕԽ-ին իր մասնակցությունն ապահովել էր նաեւ հրաձիգ Էլմիրա Կարապետյանը:

Հարությունյանն աշխարհի առաջնությունում պայքարը սկսել է որակավորման փուլից եւ վստահ հաղթանակներ տանելով ուկրաինացի Կամիլ Կերիմովի (14-3), իտալացի Սիմոնե Պիրոդուի (14-2) եւ մակեդոնացի Վլադիմիր Եգորովի (11-0) նկատմամբ՝դուրս եկել քառորդ եզրափակիչ, որտեղ, սակայն, 14-16 հաշվով զիջել էր աշխարհի գործող չեմպիոն, ճապոնացի Ռեի Հիգուչիին: Վերջինս հասել է եզրափակիչ, ինչի արդյունքում Հարությունյանը սփոփիչ գոտեմարտ անցկացնելու իրավունք է ստացել եւ 10:0 հաշվով առավելության հասել չինացի Վանհաո Ժոուի նկատմամբ:

Հայաստանի ազատ ոճի ըմբշամարտի հավաքականի կազմում ԱԱ-ում պայքարը շարունակում է միայն Եվրոպայի գործող չեմպիոն Վազգեն Թեւանյանը (65 կգ). սեպտեմբերի 19-ին Թեւանյանը կգոտեմարտի ԱԱ-ի բրոնզե մեդալի եւ օլիմպիական ուղեգրի համար:

Հայ ըմբիշը պայքարը սկսել է 1/16 եզրափակչից, որտեղ 9-0 հաշվով վստահ հաղթանակ է տարել Բելառուսը ներկայացնող ռուսաստանցի Նյուրգուն Սկրյաբինի նկատմամբ, 1/8 եզրափակչում 8-6 հաշվով առավելության է հասել Տաջիկստանի ներկայացուցչի նկատմամբ:

Քառորդ եզրափակչում Թեւանյանը ժամանակից շուտ վստահ հաղթանակ է տարել օլիմպիական փոխչեմպիոն ու բրոնզե մեդալակիր, աշխարհի եռակի չեմպիոն, ադրբեջանցի Հաջի Ալիեւի նկատմամբ՝ 12-2:

Հայաստանի ներկայացուցիչներից ավելի վաղ բրոնզե մեդալ էր նվաճել նաեւ մինչեւ 70 կգ քաշային Արման Անդրեասյանը՝ վճռորոշ գոտեմարտում 12:1 հաշվով վստահ հաղթանակ տանելով հնդիկ Աբհիմանյու Աբհիմանյուի նկատմամբ:

Սեպտեմբերի 22-ից մրցագորգը կտրամադրվի հունահռոմեական ոճի ըմբիշներին: Արմեն Բաբալարյանի գլխավորությամբ վարկանիշային ԱԱ-ին կմասնակցեն Ռուդիկ Մկրտչյանը (55 կգ), Գեւորգ Ղարիբյանը (60 կգ), Հրաչյա Պողոսյանը (63 կգ), Սլավիկ Գալստյանը (67 կգ), Շանթ Խաչատրյանը (72 կգ), Մալխաս Ամոյանը (77 կգ), Մաքսիմ Մանուկյանը (82 կգ), Գեւորգ Թադեւոսյանը (87 կգ), Արթուր Ալեքսանյանը (97 կգ) եւ Դավիթ Օվասապյանը (130 կգ):

Նշենք՝ յուրաքանչյուր օլիմպիական քաշային կարգում խաղարկվելու է 5 ուղեգիր՝4 մեդալակիրները եւ բրոնզե մեդալի համար գոտեմարտում պարտված 2 ըմբիշներից մեկը. նրանց միջեւ կանցկացվի լրացուցիչ գոտեմարտ:

ՍՊՈՐՏ

ԿՈՒՐՏՈՒԱՅԻ ՀՈՒՅՍԸ



Մադրիդի «Ռեալի» եւ Բելգիայի հավաքականի դարպասապահ Տիբո Կուրտուան ծնկի վիրահատությունից հետո գնահատել է այս մրցաշրջանում խաղադաշտ վերադառնալու հնարավորությունը:

«Խաչաձեւ կապանների վիրահատությունից հետո վերականգնողական փուլը տեւում է 7-9 ամիս: Մայիսին կանցնի 8-րդ ամիսը: Այս մրցաշրջանում դարձյալ հանդես գալու մասին կանխատեսում անել չեմ կարող:

Ես պետք է զգամ, որ լիարժեք պատրաստ եմ: Հույս ունեմ, որ մինչեւ մրցաշրջանի ավարտը կհասցնեմ մի քանի խաղի մասնակցել»,- Կուրտուայի խոսքը մեջբերում է Madrid Xtra-ն:

31-ամյա Կուրտուան Արքայական ակումբում հանդես է գալիս 2018 թվականից՝ դառնալով Իսպանիայի կրկնակի չեմպիոն, գավաթակիր, Չեմպիոնների լիգայի գավաթակիր, աշխարհի ակումբային չեմպիոն:

ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է ԶԻԴԱՆԻՆ

Իսպանիայի առաջնության 5-րդ տուրում «Ռեալ Սոսիեդադին» 2:1 հաշվով հաղթելու շնորհիվ՝ Մադրիդի «Ռեալի» իտալացի գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին հաղթանակների քանակով գերազանցել է ֆրանսիացի Զինեդին Զիդանի ցուցանիշը Արքայական ակումբում եւ բարձրացել է երկրորդ տեղ. հաղորդում է ակումբի կայքը:

Անչելոտիի գլխավորությամբ «Ռեալը» տարել է 173 հաղթանակ: Ակումբի ռեկորդակիր մարզիչը Միգել Մունյոսն է՝357 հաղթանակ:

64-ամյա Անչելոտիի գլխավորությամբ «Ռեալը» նվաճել է 10 տիտղոս:

ԿԳԼԽԱՎՈՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ

Գերմանիայի ֆուտբոլային միությունը համաձայնության է հասել Յուլիան Նագելսմանի հետ: Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիայի» նախկին գլխավոր մարզիչը կգլխավորի Գերմանիայի ազգային հավաքականը. հաղորդում է Bild-ը:

Պայմանագիրը նախատեսված կլինի մինչեւ «Եվրո-2024»-ի ավարտը: Նագելսմանի տարեկան աշխատավարձը կկազմի մոտ 400 հազար եվրո:

Գերմանացի Հանս-Դիտեր Ֆլիկի հեռացումից հետո Բունդեսթիմի գլխավոր մարզիչի պաշտոնը թափուր է:

● *Սեպտեմբերի 21-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Սիրո մենյու» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ԱՀԱԶԱՆԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարող եմ անել ես, եթե ինձ մտերիմ մեկը ենթարկվում է բռնության:

Հարութ Ալոյան (18 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե դուք ունեք ընկերներ կամ ընտանիքի անդամներ, որոնք գտնվում են անառողջ հարաբերության մեջ, ուր առկա է բռնություն, ամենակարեւոր բանը, որը կարող եք անել, փորձել լսել եւ լինել հասկացող: Մի՛ դատեք, հիշե՛ք, որ բռնության մթնոլորտում ապրելը երբեք հեշտ չէ:

Խոսե՛ք Ձեր ընկերոջ կամ ընտանիքի անդամի հետ, տեղեկացրե՛ք եւ բացատրե՛ք, որ բռնությունը նորմալ չէ: Նրանք, հնարավոր է, չգիտակցեն կամ չընդունեն, որ ենթարկվում են բռնության:

Ոչ մի դեպքում մի՛ մեղադրեք նրան եւ մի՛ առաջացրեք մեղավորության զգացում:

Բացատրե՛ք, որ նա մեղավոր չէ եւ արժանի չէ նման հարաբերությունների:

Լսե՛ք եւ փորձե՛ք ապրումակցել նրան:

Բարձրացրե՛ք նրա՝ անվտանգ եւ առողջ մթնոլորտում ապրելու իրավունքի գիտակցումը:

Յորդորե՛ք նրան զանգահարել ոստիկանություն կամ ընտանեկան բռնության թեժ գիծ եւ հայտնել բռնության դեպքի մասին:

Գտե՛ք բռնության ենթարկված անձի համար անհրաժեշտ առկա ռեսուրսներ Ձեր տարածքում:

Զանգահարե՛ք ընտանեկան բռնության թեժ գծեր Ձեր ընկերոջ կարգավիճակի մասին տեղեկացնելու համար:

Կրթե՛ք ինքներդ Ձեզ՝ կարդալով գրքեր կամ օնլայն հոդվածներ՝ ընտանեկան բռնության մասին:

Երբ Ձեր ընկերը կամ ընտանիքի անդամները հասկանում են, որ իրենց հարաբերության մեջ առկա է բռնություն, օգնե՛ք նրանց ստեղծել անհատական անվտանգության ծրագիր:

Ընտանեկան բռնության դեպքերի տվյալների առցանց հարթակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Երբ Ձեր ընկերը կամ ընտանիքի անդամները հասկանում են, որ իրենց հարաբերության մեջ առկա է բռնություն, օգնե՛ք նրանց ստեղծել անհատական անվտանգության ծրագիր:

ԱՊԱՍՏԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ իրավունքներ եւ պարտականություններ ունեն ապաստան հայցողները.

Լեք Քեբաբջյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ապաստան հայցողները Հայաստանում ազատ տեղաշարժի, աշխատելու, կրթության, անվճար իրավաբանական խորհրդատվություն ստանալու, անվճար բուժօգնություն ստանալու եւ մի շարք այլ իրավունքներ ունեն:

Նրանք իրենց իրավունքներից օգտվելիս պետք է հարգեն ՀՀ քաղաքացիների, այլ անձանց օրինական շահերը, իրավունքները եւ ազատությունները, պահպանեն հասարակական կարգը, ՀՀ անվտանգությունը:

ՀՀ ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ապաստան հայցողները պարտավոր են համագործակցել Միգրացիոն ծառայության հետ, տրամադրել հավաստի ու ճշմարիտ տեղեկություններ, վճարել բոլոր տեսակի հարկերն ու տուրքերը, ինչպես Հայաստանի քաղաքացիները: Նրանք պարտավոր են պահպանել Հայաստանի օրենսդրության պահանջները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Սեպտեմբերի 19-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, ադրբեջանական զինուժը, շփման գծի ողջ երկայնքով իրականացնելով հրթիռահրետանային նախապատրաստություն, փորձում է առաջանալ ԱՀ ՊԲ պաշտպանության խորքը: Յուրային զորքերը ցուցաբերում են համառ դիմադրություն:

Կադրեր են հրապարակվել, թե ինչ իրավիճակ է Ստեփանակերտում. շենքեր են փլուզվել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 4 + 9 +19 + 24
Կոտայքի լեռներ	+ 3 + 7 +19 + 23
Կոտայքի նախալեռներ	+11 + 13 +22 + 24
Գեղարքունիք	+ 4 + 8 +16 + 21
Լոռի	+ 5 + 9 +15 + 20
Տավուշ	+ 7 + 12 +19 + 22
Արագածոտնի լեռներ	+3 + 6 +18 + 21
Արագածոտնի նախալեռներ	+10 + 13 +22 + 27

Արարատ	+12 + 14 +25 + 28
Արմավիր	+ 9 + 12 +25 + 27
Վայոց ձորի լեռներ	+ 3 + 7 +19 + 21
Վայոց ձորի նախալեռներ	+10 + 13 +25 + 28
Սյունիքի հովիտներ	+9 + 13 +20 + 24
Սյունիքի նախալեռներ	+ 9 + 13 +20 + 24
ԼՂՀ	+9 + 13 +20 + 24
Երեւան	+13 + 15 +25 + 27

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.9.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*